ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Սույնով հաստատում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Թողարկող) 2025թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների 2025թ. տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Թողարկողի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը ու ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որոնց հետ առնչվում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն:

Հակոբ Անդրեասյան	Գլխավոր գործադիր տնօրեն		27.05.26թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ստյոպա Զաքինյան	Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ-Ֆինանսական տնօրեն		27.05.26թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արմեն Հակոբյան	Գլխավոր հաշվապահ		27.05.26թ.
(անուն,ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

«ԱԿԲԱ ԲԱՆԿ»

բաց բաժնետիրական ընկերություն

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆ

«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025թ. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվեկշռային հիմնական ցուցանիշներ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ակտիվները կազմել են **1,062 տրլն ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճելով **130,8 մլրդ ՀՀ դրամով** կամ **14,0%-ով**:

31.12.2025թ. դրությամբ Բանկի ակտիվների կառուցվածքում գերակշռում են հաճախորդներին տրամադրված վարկերը (ներառյալ ֆինանսական վարձակալությունը)՝ կազմելով ընդհանուր ակտիվների շուրջ **69,3%**-ը: Նախորդ տարվա տարեվերջի համեմատ համախառն վարկային պորտֆելն աճել է **107,2 մլրդ ՀՀ դրամով** կամ **17,0%**-ով՝ կազմելով **736,5 մլրդ ՀՀ դրամ**: Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ընդհանուր պորտֆելում ՀՀ դրամով տրամադրված վարկերի կշիռը կազմել է **78,3%**:

31.12.2025թ. դրությամբ Բանկի դրամական միջոցները (կանխիկ միջոցներ, մնացորդներ ՀՀ ԿԲ-ում և այլ թղթակից բանկերում) կազմել են **99,2 մլրդ ՀՀ դրամ**՝ ապահովելով ընդհանուր ակտիվների **9,3%**-ը:

Բանկի պարտավորությունները նախորդ տարվա տարեվերջի նկատմամբ աճել են **99,7 մլրդ ՀՀ դրամով**՝ հասնելով **868,0 մլրդ ՀՀ դրամի**:

31.12.2025թ. դրությամբ Բանկի ավանդային պորտֆելը (ցպահանջ և ժամկետային) կազմել է **618,5 մլրդ ՀՀ դրամ**: Ընդ որում, ազգային արժույթով ներգրավված միջոցների կշիռն ընդհանուր ավանդային պորտֆելում կազմել է շուրջ **70,4%**: Ըստ ժամկետայնության կառուցվածքի՝ ժամկետային ավանդները զբաղեցնում են պորտֆելի **59,7%**-ը, իսկ ցպահանջ միջոցները՝ **40,3%**-ը:

Միևնույն ժամանակ, ՀՀ կենտրոնական բանկի, Կառավարության, այլ բանկերի և ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները 31.12.2025թ. դրությամբ կազմել են **178,1 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկի ընդհանուր կապիտալը տարեվերջի դրությամբ կազմել է **194,6 մլրդ ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով **31,1 մլրդ ՀՀ դրամով** կամ **19,0%-ով:**

Եկամուտների և ծախսերի հիմնական ցուցանիշներ

31.12.2025թ. դրությամբ Բանկի զուտ տոկոսային եկամուտները կազմել են **66,4 մլրդ ՀՀ դրամ**՝ նախորդ տարվա համադրելի ժամանակահատվածի համեմատ աճելով **21,6%**-ով:

Հաշվետու ժամանակահատվածում հաճախորդներին տրված վարկերի, փոխառությունների և ֆինանսական վարձակալության գծով ստացված տոկոսային եկամուտը կազմել է **98,6 մլրդ ՀՀ դրամ**, իսկ ներդրումային գործառնություններից ստացված եկամուտը՝ **8,4 մլրդ ՀՀ դրամ**:

Միևնույն ժամանակ, միջնորդավճարների գծով եկամուտներն աճել են **27,2%**-ով և կազմել **18,7 մլրդ ՀՀ դրամ**: Առևտրային գործառնություններից ստացված զուտ եկամուտը կազմել է **7,1 մլրդ ՀՀ դրամ**:

Արդյունքում, Բանկի զուտ գործառնական եկամուտները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են **11,8 մլրդ ՀՀ դրամով**՝ կազմելով **49,3 մլրդ ՀՀ դրամ:**

Բանկի ընդհանուր վարչական և այլ գործառնական ծախսերը հաշվետու ժամանակաշրջանում կազմել են **35,8 մլրդ ՀՀ դրամ**: 2025թ. չորրորդ եռամսյակի վերջի դրությամբ աշխատակիցների թիվը հասել է **1926**-ի:

2025թ. երրորդ եռամսյակի ընթացքում Բանկի կողմից իրականացված զուտ մասհանումները կազմել են **4,3 մլրդ ՀՀ դրամ**:

Արդյունքում, երրորդ եռամսյակի տվյալներով Բանկն ապահովել է **35,9 մլրդ ՀՀ դրամի** զուտ շահույթ: Ակտիվների շահութաբերության (ROA) ցուցանիշը կազմել է **3,6%**, իսկ սեփական կապիտալի շահութաբերությունը (ROE)՝ **20,0%,** Ծախսեր-եկամուտներ հարաբերակցության ցուցանիշը (Cost-to-Income) նվազել է մինչև **42.0%:**

Մրցակցային դիրքի վերլուծություն

31.12.2025թ. դրությամբ ՀՀ բանկային համակարգում գործել են 17 առևտրային բանկեր՝ շուրջ **550** մասնաճյուղերով և **17,000** աշխատակիցներով: 2025թ. ընթացքում համակարգում արձանագրվել է ակտիվների **16,5%**, վարկային պորտֆելի **22,7%**, պարտավորությունների **13,9%** և կապիտալի **22,6%** աճ:

Նույն ժամանակահատվածում Բանկն ապահովել է ակտիվների **14,0%** և վարկային պորտֆելի **17,0%** աճ: Հաճախորդների նկատմամբ պարտավորություններն

աճել են **5,9%**-ով, իսկ կապիտալը՝ **19,0%**-ով: Տարեվերջի դրությամբ Բանկի շուկայական մասնաբաժինն ըստ ակտիվների կազմել է **8,3%**, ըստ վարկերի՝ **9,6%**, իսկ ըստ ավանդների՝ **8,4%**: Նշված բոլոր ցուցանիշների, ինչպես նաև շահութաբերության գծով Բանկը եղել է Հայաստանի առաջատար բանկերի եռյակում:

Հիմնական մրցակցային առավելությունները

- **Կապիտալիզացիայի բարձր մակարդակ.** 31.12.2025թ. դրությամբ Բանկի կապիտալն աճել է **31,2 մլրդ ՀՀ դրամով**՝ կազմելով **194,6 մլրդ ՀՀ դրամ** (3-րդ տեղը համակարգում): Բանկի առաջին մակարդակի և ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 20,46% և 23,16%, ինչը զգալիորեն գերազանցում է շուկայի միջին ցուցանիշները:
- **Առաջատար դիրք գյուղատնտեսական ֆինանսավորման շուկայում.** Բանկը շարունակում է հանդիսանալ Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի խոշորագույն ֆինանսավորողներից մեկը՝ պահպանելով խոշոր մասնաբաժին շուկայում: Շնորհիվ տասնամյակների փորձառության և պետական սուբսիդավորման ծրագրերի արդյունավետ իրացման՝ Բանկն ունի գյուղատնտեսական ռիսկերի գնահատման և կառավարման եզակի գործիքակազմ, որն ապահովում է պորտֆելի կայունությունն ու շարունակական աճը:
- **Ամենաընդգրկուն մասնաճյուղային ցանցերից մեկը.** 31.12.2025թ. դրությամբ Բանկն ունի Հայաստանի ողջ տարածքում սփռված առավել լայն և աշխարհագրորեն դիվերսիֆիկացված մասնաճյուղային ցանցերից մեկը (66 մասնաճյուղ, որոնցից 2/3-ը՝ մարզերում): Սա հնարավորություն է տալիս ապահովել ունիվերսալ բանկային ծառայությունների հասանելիությունը նաև հեռավոր մարզային համայնքներում՝ ամրապնդելով հաճախորդների հետ անմիջական կապը և ապահովելով մրցակցային առավելություն ֆիզիկական սպասարկման շուկայում:
- **Թվային էկոհամակարգի և տեխնոլոգիական լուծումների զարգացում.** Ռազմավարական կարևորություն ունեցող «acba digital» համակարգի շարունակական կատարելագործումը թույլ է տվել Բանկին զգալիորեն բարձրացնել հեռահար սպասարկման տեսակարար կշիռը: Թվային գործիքների և բիզնես գործընթացների ավտոմատացման շնորհիվ Բանկն ապահովում է հաճախորդների փորձառության բարելավում և գործառնական արդյունավետության բարձրացում՝ արագ արձագանքելով շուկայի ժամանակակից պահանջներին:

- **ՓՄՁ հատվածի զարգացում և ոչ ֆինանսական ծառայությունների մատուցում.** Բանկը Փոքր և միջին ձեռնարկատիրության հատվածի համար հանդես է գալիս որպես ռազմավարական գործընկեր՝ առաջարկելով ոչ միայն ֆինանսական լուծումներ, այլ նաև բիզնեսի զարգացմանն ուղղված կրթական ծրագրեր: «Acba Business Club»-ի միջոցով իրականացվող անվճար դասընթացները նպաստում են հաճախորդների գործարար հմտությունների զարգացմանը՝ միաժամանակ բարձրացնելով հաճախորդների լոյալության մակարդակն ու վարկային պորտֆելի որակը:
- **ESG սկզբունքների ներդրում և «Կանաչ» ֆինանսավորման առաջնահերթություն.** Բանկն ակտիվորեն ներդնում է բնապահպանական, սոցիալական և կորպորատիվ կառավարման (ESG) միջազգային ստանդարտները: Միջազգային ֆինանսական կառույցների (EBRD, KfW, GGF և այլն) հետ հաստատված երկարամյա համագործակցությունը թույլ է տալիս ներգրավել նպատակային միջոցներ էներգաարդյունավետության և կայուն գյուղատնտեսության զարգացման ծրագրերի համար՝ Բանկը դիրքավորելով որպես առաջատար «կանաչ» ֆինանսավորման ոլորտում:
- **Թափանցիկության բարձր մակարդակ և հանրային ընկերության կարգավիճակ.** Որպես Հայաստանում առաջիններից մեկը IPO իրականացրած բաց բաժնետիրական ընկերություն՝ Բանկն ապահովում է թափանցիկության և կորպորատիվ կառավարման լավագույն փորձը: Բաժնետերերի լայն շրջանակը (այդ թվում միջազգային ինստիտուցիոնալ գործընկերոջ ներկայությունը) և միջազգային ստանդարտներին համապատասխանող հաշվետվողականությունը հիմք են հանդիսանում ներդրողների վստահության և Բանկի բարձր հեղինակության համար թե՛ ներքին, թե՛ արտաքին շուկաներում:

Միջազգային վարկանիշներ

2025 թվականի ընթացքում Բանկի ֆինանսական կայունությունն ու վարկունակությունը վերահաստատվել են աշխարհի առաջատար վարկանիշային գործակալությունների կողմից.

- **Moody's Investors Service.** Գործակալությունը Բանկին շնորհել է **«Ba3»** երկարաժամկետ վարկանիշ (Long-term deposit rating)՝ **«Կայուն»** (Stable) հեռանկարով: Այս վարկանիշն արտացոլում է Բանկի ամուր դիրքերը հայաստանյան շուկայում, կապիտալիզացիայի բարձր մակարդակը և իրացվելիության բավարար պաշարները:

- **Fitch Ratings.** 2025 թվականի փետրվարին գործակալությունը վերահաստատել է Բանկի էմիտենտի դեֆոլտի երկարաժամկետ վարկանիշը (Long-Term IDR) **«BB-»** մակարդակում, ինչպես նաև կենսունակության վարկանիշը (Viability Rating)՝ **«bb-»** մակարդակում: Վարկանիշների հեռանկարը գնահատվել է որպես **«Կայուն»**:

Հետագա զարգացման հեռանկարները և ռազմավարական ուղղությունները

Առաջիկա տարիներին Բանկի զարգացման ռազմավարությունը հիմնված կլինի հաճախորդների չորս հիմնական սեգմենտների՝ **գյուղատնտեսական, մանրածախ, ՓՄՁ և կորպորատիվ** ոլորտների թիրախային սպասարկման վրա: Բանկի ծառայությունների համակարգում առանցքային նշանակություն կշարունակեն ունենալ վարկային ներդրումները, որոնք իրականացվում են Հայաստանի ողջ տարածքում՝ նպաստելով տնտեսական ակտիվության բարձրացմանը:
Բանկի գործունեության առաջնահերթություններից է հանդիսանում կայուն ռեսուրսային բազայի ընդլայնումը: Այդ նպատակով Բանկը հետևողականորեն կշարունակի ֆիզիկական և իրավաբանական անձանցից ցպահանջ և ժամկետային ավանդների ներգրավման գործընթացը: Որպես խնայողական այլընտրանքային գործիք և կապիտալի շուկայի զարգացման նախաձեռնություն՝ Բանկը նախատեսում է շարունակել թե՛ դրամային, թե՛ արտարժութային պարտատոմսերի թողարկման ակտիվ գործընթացը: Ավանդների բազայի, հատկապես ազգային արժույթով միջոցների աճի առաջնայնությունը պայմանավորված է Բանկի ակտիվների և վարկային պորտֆելի նախատեսվող դինամիկ աճի տեմպերով:

Ռազմավարական զարգացում և նորարարական մարտահրավերներ
Ֆինանսական համակարգը ներկայումս գտնվում է տրանսֆորմացիոն փուլում՝ պայմանավորված հաճախորդների վարքագծի փոփոխությամբ և տեխնոլոգիական թռիչքաձև զարգացմամբ: Միջազգային առաջատար կառույցների կանխատեսումների համաձայն՝ հաջորդ տասնամյակում բանկային ոլորտի դիմագիծը որոշելու են **արհեստական բանականությունը (AI)**, **մեքենայական ուսուցումը (ML)**, **թվային էկոհամակարգերը**, **կիբեռանվտանգությունը** և **կայուն (կանաչ) ֆինանսավորումը**:
Այս գլոբալ միտումները հանդիսանում են Բանկի զարգացման օրակարգի առանցքը: Մարտահրավերներին դիմակայելու և մրցակցային առավելությունն ամրապնդելու նպատակով Բանկն իրականացնում է հետևյալ ռազմավարական քայլերը.

1. Թվային փոխակերպում և գործառնական արդյունավետություն

Բանկը շարունակում է տարիներ առաջ մեկնարկած թվային տրանսֆորմացիայի գործընթացը՝ միավորելով մարքեթինգային, հաճախորդների հետ հարաբերությունների (CRM) և ֆինանսական կառավարման գործիքները մեկ միասնական էկոհամակարգում:

- **Ավտոմատացում և Ռոբոտացում (RPA).** Ծախսերի օպտիմալացման և մարդկային սխալի բացառման նպատակով Բանկը ներդնում է ռոբոտացված գործընթացներ, հատկապես ռեսուրսատար և կրկնվող գործառնություններում:
- **Տվյալահեն որոշումներ.** AI և ML տեխնոլոգիաների կիրառմամբ Բանկն անցում է կատարում իրական ժամանակում (real-time) որոշումների կայացմանը՝ ապահովելով հաճախորդների կարիքների աննախադեպ խորությամբ վերլուծություն և անհատականացված սպասարկում:

2. acba digital. Թվային բանկինգի էվոլյուցիան

acba digital հարթակը հանդիսանում է Բանկի առաջընթացի հիմնաքարը: Մեր նպատակն է ստեղծել միջավայր, որտեղ հաճախորդը կարող է ստանալ իր կյանքի տարբեր փուլերում անհրաժեշտ բոլոր ֆինանսական և ոչ ֆինանսական ծառայությունները մեկ հավելվածի միջոցով:

- **Վարկավորման թվայնացում.** Բանկը կատարելագործում է առցանց վարկավորման գործընթացը՝ հնարավորություն տալով վարկերի և վարկային գծերի համար դիմել և ստանալ դրանք վայրկյանների ընթացքում:
- **Քարտային պորտֆելի ընդլայնում.** Շարունակաբար ավելացվելու են քարտային պրոդուկտների և դրանցով տրամադրվող վարկային գծերի ծավալները՝ հասանելի դառնալով ՀՀ ողջ տարածքում թե՛ անհատներին, թե՛ բիզնեսին:

3. Կիբեռանվտանգություն և Տվյալների պաշտպանություն

Թվայնացմանը զուգահեռ՝ Բանկն առաջնահերթություն է տալիս կիբեռկայունությանը: Մենք որդեգրել ենք կանխարգելիչ (proactive) քաղաքականություն՝ կիրառելով պաշտպանական ժամանակակից համակարգեր և բարձրացնելով աշխատակիցների ու հաճախորդների կիբեռհիգիենայի մակարդակը:

4. Կանաչ բանկինգ և ԲՍԿ (ESG) ռազմավարություն

Հավատարիմ մնալով ՄԱԿ-ի «Կայուն զարգացման նպատակներին» և ՀՀ ԿԲ ազգային ճանապարհային քարտեզին՝ Բանկն ակտիվորեն ներդնում է **Բնապահպանական, Սոցիալական և Կառավարման (ԲՍԿ)** սկզբունքները:

- **Միջազգային գործընկերություն.** EBRD-ի, KfW-ի, GGF-ի և այլ կառույցների հետ համագործակցությամբ Բանկը ներդնում է կայուն զարգացման միջազգային չափանիշներ:
- **Կանաչ գործիքակազմ.** Մոտ ապագայում Բանկը կներդնի Կանաչ վարկերի ընթացակարգը և Կանաչ պարտատոմսերի համակարգը (Green Bond Framework)՝ նպաստելով հասարակության կայուն զարգացմանը:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

2025 թվականի չորրորդ եռամսյակում ՀՀ տնտեսական միջավայրը շարունակել է գտնվել նախորդ տարվանից փոխանցված անորոշությունների ազդեցության ներքո: Վերջիններս պայմանավորված էին տարածաշրջանային ռազմաքաղաքական լարվածությամբ և առանցքային առևտրային գործընկերների հետ տնտեսական համագործակցության ծավալների նվազման միտումներով: Արտաքին առևտրի թուլացումը և Մերձավոր Արևելքում (մասնավորապես՝ Իրանի շուրջ) հնարավոր զարգացումների բարձր անորոշությունը հավելյալ ռիսկեր են ստեղծել մակրոտնտեսական կայունության համար:

Արտաքին հատված և դրամական փոխանցումներ.
Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2025թ. հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը նվազել է շուրջ **33,2%**-ով, ինչի վրա էական ազդեցություն է ունեցել ՀՀ-ՌԴ առևտրի **42,7%** անկումը: Միևնույն ժամանակ, ըստ ՀՀ ԿԲ տվյալների, ՌԴ-ից ստացված և ՌԴ փոխանցված դրամական միջոցների զուտ ներհոսքը դոլարային արտահայտությամբ աճել է **28,6%**-ով:

Տնտեսական ակտիվություն և գնաճ.
Չնայած արտաքին մարտահրավերներին՝ ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) 2025թ. հունվար-նոյեմբեր ամիսներին աճել է **8,3%**-ով: Աճի հիմնական շարժիչներն են եղել շինարարության (**20,1%**) և ծառայությունների (**10,9%**) ոլորտները: Առևտրի շրջանառությունն աճել է **3%**-ով: Գնաճային միջավայրը մնացել է կայուն. 12-ամսյա գնաճը 2025թ. տարեվերջին կազմել է **3,8%**:

Տնտեսական հեռանկար.
Ըստ Economist Intelligence Unit (EIU) կանխատեսումների՝ առաջիկա երեք տարիներին ՀՀ ՀՆԱ-ի իրական աճը կպահպանվի կայուն տիրույթում՝ կազմելով համապատասխանաբար **4,7%**, **4,4%** և **4,1%**:»

ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓ ԲՆՈՒԹԱԳԻՐ

2025թ. չորրորդ եռամսյակում Բանկը գործել է սահմանված ռիսկի ախորժակի շրջանակներում: Կապիտալի համարժեքության ցուցանիշը շարունակել է գերազանցել ինչպես ներքին, այնպես էլ ՀՀ ԿԲ կողմից սահմանված նվազագույն շեմերը՝ ապահովելով ֆինանսական կայունության բարձր մակարդակ: Բանկի ռիսկով կշռված ակտիվների հիմնական մասը բաժին է ընկնում վարկային ռիսկին, ինչը բխում է Բանկի գործունեության ռազմավարական ուղղվածությունից:

Ակտիվների որակ և սթրես-թեստավորում

Բանկն արձանագրել է ակտիվների որակի հետևողական բարելավում. չաշխատող ակտիվների (NPA) տեսակարար կշիռը 2025թ. տարեվերջին կազմել է ընդամենը **0,84%**՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով **0,15** տոկոսային կետով: Վարկային պորտֆելի կենտրոնացվածության մակարդակն ըստ ճյուղերի և խոշոր փոխառուների պահպանվել է թիրախային սահմաններում: Չորրորդ եռամսյակի սթրես-թեստերի արդյունքները փաստում են, որ Բանկի դիմակայունությունը վարկային ռիսկի հնարավոր դրսևորումների նկատմամբ գտնվում է ընդունելի և կայուն մակարդակում:

Շուկայական ռիսկ

Բանկի շուկայական ռիսկի հիմնական աղբյուրները շարունակում են մնալ արտարժութային փոխարժեքների և տոկոսադրույքների տատանողականությունը:

- **Տոկոսադրույքի ռիսկ.** 2025թ. չորրորդ եռամսյակում ՀՀ ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը **0,25** տոկոսային կետով՝ սահմանելով այն **6,5%**:
- **Արտարժութային ռիսկ.** Միջազգային շուկաներում արձանագրված տատանումների և աշխարհաքաղաքական իրավիճակի ֆոնին, Բանկը վարել է պահպանողական քաղաքականություն: Եվրոյի և ՌԴ ռուբլու գծով էական բաց դիրքեր չեն պահվել, իսկ ԱՄՆ դոլարով «երկար» դիրքը պահպանվել է ռիսկի ախորժակի ընդունելի սահմաններում: Արդյունքում, արտարժույթի վերագնահատումից Բանկն արձանագրել է որոշակի շահույթ, իսկ սթրես-թեստերի արդյունքները փաստել են հնարավոր կորուստների զսպվածությունը:

Իրացվելիության ռիսկ

2025թ. չորրորդ եռամսյակի ընթացքում Բանկը պահպանել է իրացվելիության հուսալի մակարդակ, որը զգալիորեն գերազանցում է ՀՀ ԿԲ նորմատիվային պահանջները:

- **Ռեսուրսների կայունություն.** Չնայած արտաքին անորոշություններին՝ ավանդային պորտֆելը դրսևորել է կայունություն, ընդ որում՝ ժամկետային ավանդները կազմում են ընդհանուր պարտավորությունների **58,9%**-ը:
- **Դիվերսիֆիկացված ֆինանսավորում.** Իրացվելիության աղբյուրների բազմազանությունն ապահովվում է միջազգային գործընկերների միջոցով (ՎԶԵԲ, Proparco, Symbiotics, Triodos, EFSE և այլն):
- **Ներդրումային քաղաքականություն.** Ավելցուկային իրացվելիությունն ուղղվում է բարձր հուսալիություն ունեցող գործիքներին. պարտատոմսերի պորտֆելի **96,6%**-ը կազմում են ՀՀ պետական պարտատոմսերը:

Գործառնական ռիսկ և Տեղեկատվական անվտանգություն

Բանկում գործում է գործառնական ռիսկերի կառավարման էվոլյուցիոն համակարգ, որն ուղղված է պոտենցիալ վտանգների վաղաժամ հայտնաբերմանը:

- **Միջադեպերի կառավարում.** 2022թ.-ից վարվող գործառնական միջադեպերի բազան թույլ է տալիս թիրախային դարձնել հսկողության մեխանիզմները և նվազեցնել մարդկային սխալի գործոնը:
- **Կիբեռանվտանգություն և Սերտիֆիկացում.** Որպես թվայնացման առաջամարտիկ՝ Բանկը պարբերաբար իրականացնում է ներթափանցման թեստավորումներ (Penetration testing) միջազգային մասնագիտացված կառույցների հետ: Բանկի տեղեկատվական անվտանգության և անձնական տվյալների կառավարման համակարգերը հավաստագրված են **ISO/IEC 27001:2022** և **ISO/IEC 27701:2019** միջազգային ստանդարտներով:

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր

Բանկը վարկավորման գործընթացում առաջնորդվում է պատասխանատու ֆինանսավորման սկզբունքով: Բացառվում է այնպիսի նախագծերի ֆինանսավորումը, որոնք կարող են ունենալ անդառնալի բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա կամ չեն համապատասխանում սոցիալական պատասխանատվության չափանիշներին: